ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 4-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 12-րդ տարեդարձի եւ ծննդյան 60-ամյակի առիթով կատարվեց Հայրապետական մաղթանք:

Հայրապետական մաղթանքին ներկա էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Արարողությանը մասնակցում էին նաեւ ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, այս առիթով Հայաստան ժամանած թեմական առաջնորդներ եւ տարբեր թեմերի պատվիրակներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարներ, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա առաքելությունների ներկայացուցիչներ, գիտության եւ մշակույթի գործիչներ եւ բազում հավատացյալներ:

Տաճարի զանգերի ուրախալի ղողանջների ներքո հանդիսավոր թափորը Հայոց Հայրապետին եւ ՀՀ նախագահին Վեհարանից առաջնորդեց Մայր Տաճար, ուր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Հովնան վարդապետ Հակոբյանը ներկաներին հրավիրեց միասնական աղոթքի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենաց արեւշատության ու արդյունաշատ գահակալության եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անսասանության ու պայծառության համար:

Այնուհետեւ եպիսկոպոսաց դասը՝ հանդիսապետությամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի, ավագ խորանի վրա կատարեց Հայրապետական մաղթանքի արարողությունը, որի ընթացքում հնչեցին շնորհավորական ուղերձներ:

Ի դիմաց Գերագույն Հոգեւոր խորհրդի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության, Մայր Աթոռի պաշտոնեության եւ աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովրդի Նորին Սրբությանը գահակալության 12-րդ տարեդարձի եւ ծննդյան 60-ամյակի առիթով շնորհավորեց Մայր Աթոռի դիվանապետ **Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը**: Իր խոսքում սրբազանը մասնավորաբար անդրադարձավ Վեհափառ Հայրապետի հոգեւոր սպասավորության ուղուն: «...Իր ծնունդից 48 տարիներ հետո ապագա Հայրապետը բազմեց Հայրապետական գահին՝ վերստին հաստատելով Տիրոջն իր հավատարմությունը՝ «Տեր Աստված, ես Քո ծառան եմ եւ որդին Քո աղախնու»:

Հայրապետը ցավ ու ողբերգություն ապրեց Հայաստանում ներքաղաքական ցնցումներով ու լարվածություններով, գործեց ու նոր շնություն բերեց Մայր Եկեղեցուն, ուրախացավ Հայաստանի ու հայերի հաջողություններով, ջընկճվեց, երբ չհասկացվեց, չհուսահատվեց, երբ հանիրավի եւ անհիմն մեղադրվեց եւ միշտ ու հարատեւ կարդաց առ Աստված եւ ասաց՝ «Տեր, ես Քո ծառան եմ եւ որդին Քո աղախնու»,եւ շարունակեց հուսալ եւ արժանապես կրեց կոչումը. ԳԱՐԵԳԻՆ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ...», - նշեց Արշակ սրբազանը՝ մաղթելով Վեհափառ Հայրապետին երջանիկ, արգասաբեր գահակալություն, արեւշատություն եւ մշտանորոգ բյուր բարիք: Սրբազանն իր խոսքում նաեւ շնորհակալություն հայտնեց ՀՀ եւ ԼՂՀ իշխանություններին՝ Հայոց Եկեղեցու հովվապետի ազգաշեն ու եկեղեցաշեն ծրագրերին ըստ ամենայնի աջակից լինելու համար, մշակույթի եւ արվեստի գործիչներին, կրթության մշակներին, ազգային ու բարեսիրական հաստատությունների ներկայացուցիչներին ու համայն մեր ժողովրդին՝ Հայոց Եկեղեցուն եւ Հայոց Հայրապետին միշտ սատար ու օգնական լինելու պատրաստակամության համար:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալների անունից շնորհավորանքներ փոխանցեցին Աթոռների ներկայացուցիչները: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհավորեց **Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանը**: «Անցնող վաթսուն տարիները եւ այդ վաթսուն տարիների վերջին 12 տարիները հատկապես եղան Աստծու օրհնությամբ օծուն տարիներ Ձերդ Վեհափառության կյանքի եւ առաքելության ընթացքին: Ձեզ տրված աստվածային շնորհներով, ձեր հավատքի ուժգնությամբ ձեր հայրապետության օրերը պայծառափայլ աշխատանքներով վերածեցիք հոգեւոր մխիթարության եւ վերազարթոնքի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելության մեջ», - նշեց Սեպուհ սրբազանը՝ անդրադառնալով ինչպես Հայաստանում, այնպես եւ Սփյուռքում իրականացվող ծավալուն եկեղեցաշինությանը, Նորին Սրբության հովվապետական եւ միջեկեղեցական այցելություններին: Սրբազանն ընդգծեց, որ Վեհափառ Հայրապետի գահակալության 12 տարիներին ձեւավորված հարաբերությունները Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եւ Արամ Ա Կաթողիկոսի հետ նոր էջ բացեցին Հայ Եկեղեցու արդի պատմության մեջ. «Մենք խորապես համոզված ենք, որ այսօր մենք չենք կարող անցյալի գործելակերպով շարունակել մեր կյանքը, այսօրվա նոր մարտահրավերները մեզ բոլորին պարտավորեցնում են, որ նոր գործելակերպով ու մեր Եկեղեցու եւ Հայրենիքի առաջ

Հայրապետական մաղթանք

ծառացած մարտահավերների համապատասխան գործելակերպով գործենք ու աշխատենք»:

Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի բարեմաղթանքները փոխանցեց **Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը**՝ նշելով. «Գահակալության այս տասներկու տարիների ընթացքում Դուք կարողացաք բազում դժվարություններ հաղթահարել Ձեր անսահման եռանդով եւ ներքին ուժով: Ձեր նվիրումով ու առ Աստված հավատով, հայրենի պետության բարյացակամ աջակցությամբ, համագործակցաբար Նվիրապետական աթոռների, ինչպես նաեւ ողջ հոգեւոր դասի ու հավատավոր ժողովրդի հետ կարողացաք հասնել բազում կրոնական, կրթական, եկեղեցաշինական ծրագրերի իրագործման, որոնք կենդանի վկայություններ են Ձեր ստեղծագործ եւ արարող ոգու մասին»:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորեց Կ.Պոլսի պատրիարքական ընդհանուր փոխանորդ **Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը**: «Ձեր ծառայությունը շարունակվում է եւ տարածվում Մայր Աթոռի հովանավորությունը վայելող ամեն մարդից ներս: Հովվապետական այցելություններով մխիթարում եք Ձեր զավակներին, հոգեւորականների պատրաստությամբ ապահովում եկեղեցիների շենությունը, հրատարակչությամբ քաջալերում եք հոգեւոր գրականության ընթերցման ծավալումը, մատենադարանական շինարարությամբ հոգեւորականների մեջ ամրապնդում եք հոգեւոր գրականություն մշակելու սերը, Ձեր հայրական հորդորներով զորացնում եք հոգեւոր ծառայության պատրաստվող երիտասարդներին եւ այդ բոլորը անում եք հաստատակամությամբ, չափված ու կշռված վճռական քայլերով: Ձեր ծառայության միջոցով Եկեղեցին զորանում է, աճում, թափ ստանում՝ ավելի եռանդագին գործելու հատկապես ներկա ժամանակներում, երբ բազում հոսանքներ սպառնում են հավատքի եւ հոգեւոր կյանքի զարգացմանը», - ասաց Արամ սրբազանը:

Շնորհավորական ուղերձներից հետո «Զոն Վեհափառի» երգեցողության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրվեց Ս. Խորան, որտեղից «Դահպանիչ» աղոթքով օրհնեց արարողությանը մասնակից հավատավոր ժողովրդին:

Հայրապետական մաղթանքի ավարտին Մայր Աթոռում տեղի ունեցավ ընդունելություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ